Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ ՏԵՐ ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

# ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը: 2021 թվականի դրությամբ Երևանում գործում է 18 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 33 քահանա:

Թեմում գործող կառույցները.

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Հայ Եկեղեցասեր երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
3. Խուլերի համայնք
4. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
5. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
6. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, www.qahana.am կայքով, սոցիալական ցանցերում գործող էջերով:
7. Թեմ TV/Tem TV առցանց հեռուստաալիք
8. «Շողակն Արարատյան» ամսաթերթ
9. Գրադարան
10. Երիտասարդաց միություններ
11. Տիկնանց միություններ
12. Կիրակնօրյա դպրոցներ
13. Ծխական խորհուրդներ
14. «Շողակաթ» հոգևոր գրախանութ

# ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

**ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ**

Տեր Պետրոս ավգ. քհն. Մալյան (հոգևոր հովիվ)

Տեր Շահե քհն. Հայրապետյան

Տեր Եսայի քհն. Արթենյան

Տեր Անուշավան քհն. Կոշեցյան

**ԶՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**

Տեր Գրիգոր քհն. Գրիգորյան (հոգևոր հովիվ)

Տեր Հայկազուն քհն. Մկրտչյան

Տեր Վահան քհն. Առաքելյան

**ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ (Կոնդ)**

Տեր Տիրայր ավգ. քհն. Սահրադյան (հոգևոր հովիվ)

Տեր Ավետիս ավգ. քհն. Դանիելյան

Տեր Դանիել քհն. Բաղումյան

**ՍՈՒՐԲ ԽԱՉ (Արաբկիր)**

Տեր Պարթև քհն. Մուրադյան(հոգևոր հովիվ)

Տեր Բաբկեն քհն. Հայրապետյան

**ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Մալաթիա)**

Տեր Տիրան ավգ. քհն. Առուշանյան (հոգևոր հովիվ)

Տեր Մկրտիչ ավգ. քհն. Թովմասյան

**ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորք-Մարաշ)**

Տեր Զաքարիա քհն. Ավետիսյան (հոգևոր հովիվ)

Տեր Թովմա քհն. Անդրեասյան

Տեր Զգոն քհն. Աբրահամյան

**ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**

Տեր Զենոն քհն. Բարսեղյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Քանաքեռ)**

Տեր Շմավոն քհն. Ղևոնդյան (հոգևոր հովիվ)

Տեր Գաբրիել քհն. Պետրոսյան

.

**ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորք)**

Տեր Նորայր ավգ. քհն Բաղդասարյան (հոգևոր հովիվ)

Տեր Վարդան ավգ. քհն. Մկրտչյան

Տեր Կարապետ քհն. Կարապետյան

**ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Դավթաշեն)**

Տեր Խորեն քհն. Մարուքյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Չարբախ)**

Տեր Հրաչյա քհն. Գյոզալյան (հոգևոր հովիվ)

**ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Շենգավիթ)**

Տեր Զարեհ քհն. Աշուրյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (ՀԱԹ)**
Տեր Վարդան քհն. Գափոյան (հոգևոր հովիվ)
Տեր Արարատ քհն. Օրդոյան

**ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Ավան)**
Տեր Հարություն քհն. Ավագյան (հոգևոր հովիվ)

**ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ**
Տեր Զգոն քհն Աբրահամյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Նորագավիթ)**
Տեր Ղուկաս քհն. Բալայան (հոգևոր հովիվ)
Տեր Մյուռոն ավգ. քհն. Ադամյան

**ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Նուբարաշեն)**
Տեր Բարդուղիմեոս քհն. Հակոբյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորքի 1-ին զանգված)**
Տեր Աշոտ քհն. Սաֆարյան (հոգևոր հովիվ)

**ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Եռաբլուր պանթեոն)**
Տեր Զաքարիա քհն. Անանյան (հոգևոր հովիվ)

# ԹԵՄՈՒՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՂ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

Համբարձումյան Գևորգ Արշավիրի

Սարգսյան Ալեքսանդր Սարգսի

Մարդիգյան Թոմաս Անտրանիգի

Ներսեսյան Հովհաննես Ալեքսանի

Դոխոյան Վաչագան Ղարիբի

Շահմիրզայան Վահե Հայրապետի

Մանուկյան Կարեն Հմայակի

Հովհաննիսյան Բենիկ Կարապետի

Սահրադյան Սուրեն Արշակի

Սարգսյան Հրանտ Աշոտի

Պողոսյան Սամվել Արթուրի

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Հունվարի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհի Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ, առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում մատուցվեց Սուրբ Ծննդյան ճրագալույցի Սուրբ և Անմահ Պատարագ:







Հունվարի 6-ին առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհի Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ մատուցվեց Սուրբ Ծննդյան Սուրբ Պատարագ: Սրբազան Հորը որպես ընթերականներ սպասավորում էին Տեր Շահե քահանա Հայրապետյանը և Տեր Եսայի քահանա Արթենյանը:

Սուրբ Պատարագի ավարտին Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը կատարեց Ջրօրհնեքի կարգ:

# ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Հունվարի 30-ին Սուրբ և Անմահ Պատարագ մատուցվեց առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնի առթիվ: Ներկա էին Հատուկ հանձնարարություններով Հայրապետական նվիրակ Գերաշնորհ Տեր Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Արցախի թեմի նորանշանակ առաջնորդ Գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ՀՀ ԶՈւ գնդերեցներ:







Հընթացս Սուրբ Պատարագի Սրբազան հայրերը Սուրբ Սարգսի մասունքակիր աջով և 17-րդ դարում Սուրբ Սարգիս եկեղեցում ընդօրինակված Ավետարանով օրհնեցին գնդերեցներին, զինվորականներին ու հավատացյալներին:



Հունվարի 30-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը պարգևատրեց ՀՀ ԶՈւ հոգևոր առաջնորդության գնդերեցներին: Քսանվեց գնդերեցի շնորհվեց Սուրբ Սարգիս զորավարի խորհրդանշական խաչեր ու դրամական պարգև (ընդհանուր՝ 4 միլիոն ՀՀ դրամ):



# Իմ_Սրտի_Զինվոր

Երիտասարդների
բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի
տոնին, Սուրբ Սարգիս եկեղեցու
խորհրդակատար,
ԱՀԹ Տեղեկատվական բաժնի
համակարգող
Տեր Եսայի քահանա Արթենյանը
և, «Բուկինիստ» ընկերության
ներկայացուցիչները
այցելեցին Հայրենիքի պաշտպանի
վերականգնողական կենտրոն:







# ԾԱՂԿԱԶԱՐԴ



Մարտի 28-ին՝ Ծաղկազարդի տոնին, թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում Սուրբ Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Հավարտ Սուրբ Պատարագի՝ Նավասարդ Սրբազանը կատարեց Մանուկների օրհնության կարգ:

Սուրբ Պատարագից հետո թեմի մի շարք եկեղեցիների բակերում կազմակերպվեցին տոնական միջոցառումներ:

Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու Տիկնանց միության անդամները կազմակերպեցին տոնական ուտեստների, ձեռագործ իրերի վաճառք, որի ողջ հասույթը ուղղվեց բարեգործական նախաձեռնությունների:

Նորագավթի Սուրբ Գևորգ և Ներքին Չարբախի Սուրբ Խաչ եկեղեցիներում
տեղի ունեցավ Արցախի ավանդական ժենգյալով հացի պատրաստում և հյուրասիրություն: «Մարաթուկ» ազգային երգ ու պարի խումբը հանդես եկավ կատարումներով:

# ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ



Ապրիլի 1-ին՝ Ավագ Հինգշաբթի առավոտյան, բոլոր եկեղեցիներում կատարվեց Ապաշխարության կարգ, ապա մատուցվեց բաց խորանով Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման:



Բոլոր եկեղեցիներում կատարվեց Ոտնլվայի կարգ:

# ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ



Թեմի երիտասարդները, ԱՀԹ Երիտասարդաց միությունների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ, Ծրագալույցի Սուրբ Պատարագից հետո, թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց սկսեցին Կանթեղներով երթը:

Սուրբ Հարության շարականների ուղեկցությամբ անցնելով Մ. Մաշտոցի պողոտայով՝ մասնակիցները շարժվեցին դեպի Հանրապետության հրապարակ, ուր քարե գորգի վրա վառվող կանթեղներով խաչ կազմեցին՝ ի նշան Քրիստոսի Հրաշափառ Հարության:



Ապրիլի 4-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը  առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում մատուցեց Զատկական Սուրբ Պատարագ:

# ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



**Ապրիլի 27-ին Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցիների բակում տեղի ունեցավ բացօթյա համերգային երեկո: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հետ համատեղ կազմակերպված այս համերգային ծրագիրը տեղի ունեցավ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում: Համերգային երեկոն մեկնարկեց Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցիների հոգևոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանի օրհնության խոսքով:**

# ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿ



Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ Զորավորր Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպվեց միջոցառում՝ երեխաների օրը վերածելով հեքիաթի:

# ՄՐՑՈՒՄՍ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ



Սեպտեմբերի 25-ին Նորք-Մարաշ վարչական շրջանի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում նշվեց Մարաշի վերածնության՝ արդեն ավանդական դարձած տոնը:

# ՕԾՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ԽԱՉԸ



Հոկտեմբերի 16-ին Արարատյան Հայրապետական թեմի Սուրբ Աննա եկեղեցում Սուրբ Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Պատարագիչը Տեր Վարագդատ քահանա Նաջարյանն էր:

Հավարտ Սուրբ Պատարագի Նավասարդ Սրբազանն օծեց Սուրբ Սեղանի խաչը, որը նվիրաբերել է եկեղեցու խաչքավոր տիար Տիգրան Հակոբյանը:

# ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ապրիլի 20-ին Արարատյան Հայրապետական թեմում մեկնարկեց Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացը:

Սեպտեմբերի 26-ին ՀԱԹ Սուրբ Երրորդություն եկեղեցու դահլիճում տեղի ունեցավ դասընթացի մասնակիցների գրավոր քննությունը:



Հոկտեմբերի 22-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրի ամփոփումն ու մասնակիցների՝ վկայականների հանձնման արարողությունը:

Եռամյա դասընթացին մասնակցելու համար դիմել էին մոտ 150 ուսուցիչներ:
Նրանցից շուրջ 60-ը հանձնեցին գրավոր ու բանավոր քննությունները, իսկ 30 ուսուցիչներ արդեն ստանձնել են Կիրակնօրյա դպրոցներում դասավանդելու պատասխանատվությունը:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՅԹ եկեղեցիները, համայնքի ներկայացուցիչների, երիտասարդաց միությունների և եկեղեցական ծխական խորհուրդների աջակցությամբ իրականացրել են ընդհանուր առմամբ 6.425. 000 (վեց միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով սոցիալական ծրագրեր, որոնցից՝

Ըստ աջակցության տեսակների՝

| | |
|---|---|
| Բնաիրային աջակցություն | 2.865.000 ՀՀԴ |
| Դրամական աջակցություն | 3.560.000 ՀՀԴ |

Ըստ շահառուների՝

| | |
|---|---|
| անհատներ (քանակ) | 1644 |
| ընտանիքներ (քանակ) | 548 |

| | |
|---|---|
| **բնաիրային աջակցություն** | **2.865.000 ՀՀԴ** |
| անհատներ (քանակ) | 753 |
| ընտանիքներ (քանակ) | 251 |
| | |
| **դրամական աջակցություն** | **3.560.000 ՀՀԴ** |
| անհատներ (քանակ) | 891 |
| ընտանիքներ (քանակ) | 297 |

# ԾԽԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Հատուկ կարևորվում է նաև երիտասարդների շնորհների բացահայտումն ու ինքնահաստատումը հասարակական կյանքում:

**Թեմում գործում է՝**
**Երիտասարդաց 12 միություն՝**
**249 անդամներով:**

Երիտասարդաց միությունների հետ կազմակերպվում են Աստվածաշնչի սերտողություններ, հոգևոր զրույցներ, ազգային, եկեղեցական տոների առթիվ միջոցառումներ, ուխտագնացություններ, խաչերթեր, սոցիալական ծրագրեր:

### ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական-համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ՝ տիկնանց միության անդամները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին, կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին:

**Թեմում գործում է՝**
**Տիկնանց 4 միություն՝**
**82 անդամներով:**

### ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականներին հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից:

### ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Այս կառույցի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Երեխաների քրիստոնեական դաստիարակությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների զորացման գրավականն է:

**Թեմում գործում է՝**
**կիրակնօրյա 18 դպրոց՝**
**402 աշակերտներով:**

2021 թվականին ԱՀԹ եկեղեցիներում կատարվել է՝

**2618 Ս. Պսակ**
**9027 Ս. Մկրտություն**